ՄԱՅՐ ԱԹՈՌ

«Արարատ» ամսագրի յարգելի խմբագրութեան

Տիֆլիսի ս. Ստեփաննոս կուսանոցի մայրապետ աւագ սարկաւագուհի Հռիփսիմէ Թայլրեան նուիրել է Մայր Տաճարին հայրապետական օծման և միւռոնի կաթսայի երկու քող արծաթաթել ծոպերով. իսկ Գանձակի վիճակի Բագա գիւղացի Տ. Մեսրոպ քհնյ. Ստեփաննոսեանցը, ի յիշատակ իր հանգուցեալ ամուսնոյ Անանայի, նուիրել է մի Բուխարայի կապերտ, 65 ռ. արժողութեամբ:

Օրհնում եմ վերոդրեալ բարեպաշտ նուիրատուներին բարեմաղթելով, որ Աստուած ի հաճոյս իւր ընդունի նրանց նուիրական ուխտը:

Տ. Ներսէս քահանայ Տէր Կարապետեանը ուղարկել է իր հաշուով Մայր Տաճարի դռների համար երեք հատ արտասահմանեան ընտիր փականքներ, որոնք գնծագրվում են մինչև այժմ, և արժեն 90 ռուբլի:

Արժանապատիւ քահանայի այդ սրտաբուղխ նուէրը ընդունելով իբրև առհաւատչեայ նրա առ Մայր Աթոռն ունեցած երախտագիտութեան, յայտնում եմ նուիրատուին իմ Ջերմ շնորհակալիքս և լաւագոյն բարեմաղթութիւններս:

Այս մասին խնդրում եմ հրատարակել «Արարատի» առաջիկայ համարում:

Մայր Տաճարի Լուսարարապետ՝ **Դեւոնդ եպիսկոպոս**